



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

*Ը ն դ ու ն վ ե լ է*

Գ ի տ ա կ ա ն խ ո թ հ թ դ ի 03.06.2013

Թ վ ա կ ա ն ի թ ի վ 11 ո թ ո շ մ ա մ ք ,

*Հ ա ս տ ա տ վ ե լ է*

Ե Պ Բ Հ ո ե կ տ ո թ ի 27.06.2013 թ վ ա կ ա ն ի

թ ի վ 73-Մ հ թ ա մ ա ն ո վ

Ռ ե կ տ ո թ Մ . Զ . Ն ա թ ի մ ա ն յ ա ն

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Համալսարան) շարունակական մասնագիտական կրթությունը ապահովում է բժիշկների, ստոմատոլոգների, դեղագետների, միջին բուժանձնակազմի և դեղագործների (այսուհետ՝ Մասնագետ) հմտությունների կատարելագործման և նոր մասնագիտական գիտելիքների ձեռքբերման գործընթացը աշխատանքային գործունեության ընթացքում:

2. Կատարելագործման նպատակն է հետդիպլոմային կրթության շրջանակներում բարձրացնել Մասնագետի որակավորումը, հիմնվելով բժշկական գիտության և տեխնիկայի նորագույն և արդիական նվաճումների վրա:

3. Կատարելագործման հիմնական խնդիրն է տեսական գիտելիքների խորացումը, նոր մեթոդների և տեխնոլոգիաների յուրացումը՝ գործնական աշխատանքում կիրառելու համար:

4. Կատարելագործումը հետդիպլոմային շարունակական կրթության պարտադիր ձևն է, սահմանված ՀՀ Կառավարության կողմից (ՀՀ Կառավարության 19.07.1994 թվականի թիվ 330 որոշում): Մասնագետը համապատասխան մասնագիտական որակավորում ստանալուց կամ վերջին մասնագիտական կատարելագործումն անցնելուց հետո պարտավոր է ոչ ուշ քան 5 տարվա ընթացքում անցնել տվյալ մասնագիտության գծով հերթական կատարելագործում:

5. Կատարելագործման դասընթացները կազմակերպվում են պետական պատվերով և վճարովի հիմունքներով: Վճարովի համակարգի կատարելագործման դասընթացների վարձաչափը սահմանվում է Համալսարանի կողմից:

6. Կատարելագործման դասընթացների կրթական բազաները համալսարանական հիվանդանոցները, պոլիկլինիկաները, դեղատները և այն բժշկական հաստատությունները, որտեղ տեղակայված են Համալսարանի ամբիոնները:

7. Շարունակական մասնագիտական կրթության գործընթացի կազմակերպումն իրականացվում և վերահսկվում է Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի կողմից:

8. Կատարելագործման ուսումնական ծրագրերը, արդի բժշկագիտության զարգացմանը համահունչ, համապատասխան ամբիոնների կողմից ամեն տարի վերանայվում են և լրացվում: Կատարելագործման դասընթացների ծրագրերի թեմաները, տևողությունը քննարկվում և երաշխավորվում են Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կողմից ու հաստատվում ռեկտորի հրամանով:

9. Կատարելագործման դասընթացների ուսումնաարտադրական պլանը մշակվում է Համալսարանի ամբիոնների կողմից՝ յուրաքանչյուր տարվա համար և հաստատվում ռեկտորի հրամանով:

10. Կատարելագործման դասընթացների տևողությունը 1-ից մինչև 7 շաբաթ է: Թեմատիկ կատարելագործումը նախատեսում է տվյալ մասնագիտության որոշակի բաժինների (թեմաների) տեսական և գործնական որոշակի հարցերի ուսումնասիրություն, որն ուղղված է Մասնագետի աշխատանքը նորովի և առավել բարձր որակով իրականացնելու համար:

11. Կատարելագործման դասընթացներին Մասնագետի ընդգրկումը կատարվում է ընթացիկ տարվա կատարելագործման ուսումնասիրտադրական պլանի համաձայն:

12. Կատարելագործմանը մասնակցելու համար Մասնագետը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- ուղեգիր՝ կնքված կազմակերպության ղեկավարի կողմից,
- ուսումնական հաստատության ավարտական վկայականի (դիպլոմ) պատճենը,
- մասնագիտացման վկայականի (դիպլոմի) պատճենը,
- Մասնագետի լիցենզիայի պատճենը (առկայության դեպքում),
- նախորդ կատարելագործումների վկայականները,
- անձնական քարտ (լրացվում է գործերը ներկայացնելու ժամանակ),
- աշխատանքային գրքույկի պատճենը,
- անձնագրի պատճենը:

13. Համալսարանը կարող է պլանից դուրս կազմակերպել անհատական և արտագնա կատարելագործման դասընթացներ:

Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հետբուհական մասնագիտական կրթություն (լրացուցիչ մասնագիտացում, նոր մեթոդիկաների ուսումնասիրություն և այլն) հրավիրվող մասնագետի հետ կնքելով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

14. Կատարելագործման դասընթացի ծրագիրը կատարելուց և ատեստավորվելուց հետո Մասնագետը ստանում է համապատասխան վկայական:

15. Անհարգելի բացակայություններ ունեցող, կատարելագործման ծրագիրը լիարժեք չկատարած և չատեստավորված Մասնագետը հեռացվում է դասընթացներից:

16. Մասնագետը սեփական նախաձեռնությամբ, կատարելագործման դասընթացների շրջանակներում, կարող է անցնել իր հիմնական մասնագիտությանը հարակից կամ իր ինքնուրույն մասնագիտական գործունեությանն օժանդակող նեղ մասնագիտությունների գծով կատարելագործում: Նմանօրինակ կատարելագործման դասընթացին մասնակցելու դեպքում տրվում է տեղեկանք այն մասին, որ վերջինս լսել է կատարելագործման տվյալ կուրսը:

17. Համալսարանում կազմակերպվում է նաև բժիշկների լրացուցիչ մասնագիտացում:

18. Լրացուցիչ մասնագիտացման ծրագիրը լիովին կատարելուց հետո մասնագիտացողն ատեստավորվում է ավարտական քանավոր քննության միջոցով և ստանում համապատասխան վկայական:

Ավարտական քննությունը չհանձնելու դեպքում մասնագիտացողին հնարավորություն է տրվում այն վերահանձնել 1 ամսվա ընթացքում: Չվերահանձնելու դեպքում մասնագիտացողը պարտավոր է վճարովի հիմունքներով կրկնել ամբողջ դասընթացը:

Անհարգելի բացակայություններ ունեցող և մասնագիտացման ծրագիրը լիարժեք չկատարած մասնագետը հեռացվում է դասընթացներից:

19. Համալսարանում կազմակերպվում է նաև միջին բուժաշխատողների մասնագիտացում՝ 3-ից 6 ամիս տևողությամբ:

Մասնագիտացման ծրագիրը կատարելուց հետո մասնագիտացողը հանձնում է ավարտական քննություն և ստանում համապատասխան վկայական:

Ավարտական քննությունը չհանձնելու դեպքում մասնագիտացողին հնարավորություն է տրվում այն վերահանձնել 1 ամսվա ընթացքում: Չվերահանձնելու դեպքում մասնագիտացողը պարտավոր է վճարովի հիմունքներով կրկնել ամբողջ դասընթացը:

Անհարգելի բացակայություններ ունեցող և մասնագիտացման ծրագիրը լիարժեք չկատարած մասնագետը հեռացվում է:

---